ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 25 » մարտ 2025թ. No 1765 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/1250-25 առ 17.03.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 4 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1)Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի մարտի «25 » - ի N1765 - Ա հրամանի

Գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Գաստրիտոլ	մատնունի սագի խոտ, երիցուկ դեղատուի ծաղիկներ, մատուտակի արմատներ, հրեշտակաբույսի արմատներ, օրինափշի խոտ, դառը օշինդրի խոտ	կաթիլներ ներքին ընդունման	0.35մլ/մլ+0.2մլ/մլ+0.15մլ/մլ+0.05մլ/մլ+0.05մլ/մլ+0.05մլ/մլ 20մլ ապակե սրվակ-կաթոցիկ, 50մլ ապակե սրվակ-կաթոցիկ, 100մլ ապակե սրվակ-կաթոցիկ	Դր. Գուստավ Կլեյն ԳմբՀ և Քո. ԿԳ, Շտեյնենֆելդ 3, 77736 Զել ամ Հարմերսբախ- բալք արտադրող, փաթեթավորող, որակի (ֆիզիկոքիմիական) և բաց թողնման հսկող, ԳԲԱ Ֆարմա ԳմբՀ, Էռնստ-Աբե փ. 40, Ուլմ, Բադեն-Վուրթեմբերգ, 89079, Գերմանիա- որակի հսկող (մանրէաբանական)	Գերմանիա	Ալպեն Ֆարմա ԳմբՀ, Շտեյնենֆելդ 3, 77736 Զել ամ	Գերմանիա	ԱԴ	22811 14.03.2025
2	Օն.սետրոն-Դենկ 4մգ ՕԴՏ	օնդանսետրոն	դեղահատեր բերանի խոռոչում լուծվող	4մգ (6/1x6/) բլիստերում	Դենկ Ֆարմա ԳմբՀ և Քո. ԿԳ, Գոլլ փ. 1, 84529 Թիթմոնինգ- բալք արտադրող, որակի (ֆիզիկոքիմիական) և բաց թողնման հսկող, Սվիսս Կապս ԳմբՀ, Գրասինգերշտրասե 9, 83043 Բադ Ամբրինգ, Գերմանիա- փաթեթավորող, Լաբոր Լ.Ս ՍԵ և Քո. ԿԳ, Մանգելֆելդ 4, 5, 6, Բադ Բոկլետ- Գրոսենբրաին, Բավարիա, 97708, Գերմանիա- որակի հսկող (մանրէաբանական)	Գերմանիա	Դենկ Ֆարմա ԳմբՀ և Քո. ԿԳ, Պրինցրեգենտեն փ. 79, 81675 Մյունխեն	Գերմանիա	Դ	22812 14.03.2025

3	Ացելբիա	ռիտուքսիմաբ	խտանյութ կաթիլաներարկման լուծույթի	10մգ/մլ; 50մլ ապակե սրվակ	ԲԻՈԿԱԴ ԲԸ, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, փ. Սվյազի, տ. 38, մասնաշենք 1, Սանկտ Պետերբուրգ, 198515	Ռուսաստան	ԲԻՈԿԱԴ ԲԸ, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, փ. Սվյազի, տ. 38, մասնաշենք 1, տար.89, Սանկտ Պետերբուրգ, 198515	Ռուսաստան	Դ	22813 14.03.2025
4	Ացելբիա	ռիտուքսիմաբ	խտանյութ կաթիլաներարկման լուծույթի	10մգ/մլ; (2/1x2/) ապակե սրվակներ 10մլ բլիստերում	ԲԻՈԿԱԴ ԲԸ, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, փ. Սվյազի, տ. 38, մասնաշենք 1, Սանկտ Պետերբուրգ, 198515	Ռուսաստան	ԲԻՈԿԱԴ ԲԸ, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, փ. Սվյազի, տ. 38, մասնաշենք 1, տար.89, Սանկտ Պետերբուրգ, 198515	Ռուսաստան	Դ	22814 14.03.2025